

Տտնտեսության ճգնաժամի ժամանակ շատ տնտեսավարողների, որքան էլ ցավալի է, սպասվում է սնանկացում, սակայն մեր օրերում պարտապանները, որոնք չեն կարողացել մարել իրենց պարտավորությունները, չեն ստրկացվում՝ ինչպես Հին Հունաստանում, նրանց չի սպասում մահապատիժ՝ ինչպես հին Հռոմում, ավելին՝ նրանց չի սպառնում բանտարկությունը՝ ինչպես միջնադարյան Եվրոպայում: Ամեն ինչ ավելի մարդասիրական է, քանի որ շատ երկրների օրենսդրություններ պաշտպանում են առանց միջոցների մնացած պարտապանների շահերը, նրանց թույլ են տալիս վերակազմավորվել, եւ գումարներ հայթայթելու ժամանակ է տրվում: Իսկ հաճախ ընձեռնվում է մեքենայությունների կիրառման մի շարք հնարավորություններ:

Սնանկացումը տնտեսության սանիտարն է, եւ այն տնտեսական շրջանառության բնականոն երեւոյթ է: Սակայն հաճախ դրան զուգահեռ տնտեսության սուբյեկտներից առանձնանում է մի գանգված, որն անբարեխղճորեն փորձում է սնանկությունը մեքենայությունների դաշտի վերածել: Դրա համար, իհարկե, կիրառվում են բազմաթիվ գործիքներ ու միջոցներ, եւ նշված մեքենայությունների համակարգը շատ ավելի խոր ու խճճված է, սակայն, ընհանուր առմամբ, դրանցում առկա հիմնական կորիզը, որը կիրառելի է հայ իրականության մեջ, հետեւյալն է:

Սնանկության պատճառները հաճախ օբյեկտիվ բնույթ են կրում, եւ առաջացած ֆինանսական դժվարության դեպքում «Սնանկության մասին» օրենքով սնանկ ճանաչելու դիմումի համար նախատեսված կետանցի 30 օր՝ ժամանակը պարզապես անիրական է, որպեսզի կազմակերպությունը վերականգնի իր վճարունակությունը: Արդյունքում՝ սնանկացման իրողությունն անխուսափելի է:

Հայտնի են դեպքեր, երբ փոխատուները, որոնք այնքան էլ շահագրգիռ չեն պարտապանի հետագա առողջացմամբ, որպեսզի առավելագույնս կարճ ժամանակամիջոցում ետ ստանան իրենց միջոցները, պարտապան կազմակերպությանը ներքաշում են դատական սնանկացման մեջ, նույնիսկ այն դեպքերում, երբ սնանկության գործընթացի իրական հիմքեր չկան: Օրինակ՝ լինում են դեպքեր, երբ խոշոր կազմակերպության աշխատակիցները ֆինանսական հսկայական հոսքերի մեջ անփութության պատճառով բաց են թողել սնանկության օրենքով նախատեսված 500 հազար դրամի չափով պարտավորության մարում, իսկ «պահանջկոտ» պարտատիրոջ հայցով ընկերությունը ներքաշվում է սնանկացման գործընթացի մեջ: Այստեղ մեղքի բաժին ունի պարտապան ընկերության կառավարիչը: Եթե դու գործիմաց կառավարիչ ես, պետք է հետեւես ու տեղյակ լինես ֆիրմայի ֆինանսական բոլոր պարտավորություններին՝ անկախ դրանց մեծ կամ փոքր լինելու հանգամանքից: Արդյունքում՝ եթե կազմակերպությունն ունի մի շարք պարտատերեր, սակայն դրանցից միայն մեկն է նման դիմումով ներկայացել դատարան, ապա դատարանն առկա փաստի օրինականու-

թյունը ստուգելուց հետո՝ իրավունք չունի չընդունել դիմումը: Դատարանը լուծարային կառավարչի միջոցով հայտարարում է ֆիրմայի անվճարունակության մասին եւ կասեցնում նրա բնականոն գործունեությունը: Հայտնվում են նորանոր կրեդիտորներ, եւ ֆիրման ստիպված մխրճվում է ցպահանջ պարտքերի մեջ՝ կորցնելով գործունեության վերականգնման գրեթե բոլոր հնարավորությունները:

Սնանկացումը ոչ միայն օգտագործվում է ճարպիկ մտածված տնտեսական շղթայական գործարքների իրականացմամբ կազմակերպության ակտիվների դուրսբերման նպատակով, այլեւ հանդիսանում է ակտիվորեն կիրառվում է իբրեւ գործիք մրցակցային կորպորատիվ պայքարում՝ որպես կազմակերպության բաժնետոմսերի գնման այլընտրանքային մեխանիզմ: **Ազդեհիվ ներդրողը, ակտիվորեն հայտնաբերելով եւ գնելով աջքի ընկած կազմակերպության պարտքերի ստացման իրավունքը, ճիշտ ընտրելով ժամանակը, կարող է սնանկացման գործընթացը հրահրել եւ համագործակցող վարչական կառավարչի միջոցով կառավարել կազմակերպության ֆինանսական հոսքերն ու վերահսկել նրա գործողությունները: Առողջացման ծրագրի շրջանակներում, հանդես գալով որպես գլխավոր պարտատեր, նա կարող է իր պարտքային գումարների դիմաց պահանջել կազմակերպության կորպորատիվ կառավարման իրավունքները: Սա վկայում է, որ սնանկացումը կարող է օգտագործվել որպես համեմատաբար էժան եւ արդյունավետ գործիք՝ սովետային սեփականաշնորհման ժամանակ: Նման գործողությունը պետք է մանրակրկիտ պլանավորված եւ լավ պատրաստված լինի: Այն պահանջում է կանխիկ զգալի միջոցներ, լավ տեղեկացվածություն, եւ հարկ է վստահ լինել, որ պարտատերերի խորհրդում ձեռք կբերվի ձայների գերակշիռ մեծամասնությունը:**

Նմանապես մրցակցային պայմաններում վերոհիշյալ երեւոյթի դեպքում «ոչ բարեխիղճ» պարտատերը կանխամտածված նպատակով է պարտապանի սնանկացմանը, եւ չի ցանկանում, որ պարտքը մարվի անմիջականորեն, այլ՝ սնանկացման ճանապարհով: Հայտնի են դեպքեր, երբ պարտատերը, նույնիսկ դատական վարույթի ընթացքում չտեղեկացնելով պարտապանին, անընդհատ փոփոխում է իր բանկային հաշիվները, որպեսզի տրված ժամանակահատվածում պարտապանը չկարողանա փոխանցել պարտքի գումարը: Դեպքերի նմանատիպ զարգացումը հնարավորություն է տալիս ազատվել շուկայական մրցակցից:

Վերջին տարիների իրադարձությունները ցույց են տալիս, որ լուծարային գործընթացները դարձել են սեփականության երկրորդային վերաբաշխման յուրատիպ մարտադաշտ⁶, եւ դրանում գլխավոր դերը տրված է լուծարային կառավարիչներին: Նրանք, առանձին կրեդիտորների կամ արտաքին գնորդների հետ համաձայնության գալով, իջեցված գներով կամ պարտավորությունների անհամարժեք մարմանը վերջիններիս են փոխանցում պարտապան կազմակերպության գույքը:

ՍՆԱՆԿԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԶԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԴԱՇՏ

Ատենախոսության թեմա՝
Կազմակերպությունների սնանկացման
վիճակագրական գնահատման
հիմնախնդիրները
(ՀՀ արդյունաբերության օրինակով)
Գիտական ղեկավար՝
Արմեն ՃՈՂՈՒՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Արման
ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ
«Հաշվապահական
հաշվառում եւ
վիճակագրություն»
մասնագիտության
ասպիրանտ



իրական կյանքում քիչ չեն դեպքերը, երբ պետական ենթակայության տակ գտնվող տնտեսական խոշոր կառույցներում շահագրգիռ անձանց ներթափանցման, մասնավոր ներդրումների կատարման կամ սեփականաշնորհման համար պետական չինտերեսների կողմից, ոչ առանց անձնական շահի, կատարվում է տնտեսավարող պետական սուբյեկտի ծախսերի ուժեղացում, որպես արդյունք այն սնանկացվում է: Այնուհետև հայտնի մեխանիզմով՝ գույքի գների էական նվազեցմամբ այն անցնում է նոր սեփականատիրոջը: Նույնիսկ եթե գործը չի հասնում սնանկացման (պետական հատվածի անվճարունակությունն օրենսդրոյն տարբերակվում է մասնավոր գործարարությունից), ապա գործում է հետեւյալ հայտնի գործոնը՝ աշխատող եւ ամբողջական բիզնեսը միշտ էլ թանկ է սառեցված եւ մասնատված բիզնեսից, որին էլ ձգտում են հասնել նոր ներդրողները:

Ըստ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ կառավարիչն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակում է հայտարարություն՝ պարտապանին պատկանող գույքի հրապարակային սակարկություններով վաճառքի մասին, որը փակցվում է նաեւ դատարանի շենքում՝ դրա համար հատուկ հատկացված տեղում: Սակայն հաճախ կազմակերպության բացառիկ նշանակության ակտիվները (գիտական տեխնոլոգիաներ, ռազմավարական նշանակության սարքավորումներ, պատրաստի բիզնես) տարածվող տեղեկատվության ոչ պատշաճ մակարդակով ուղղորդման պատճառով չեն հասցվում ներուժային գնորդների իրական շուկա, արդյունքում՝ նշված ակտիվները վաճառվում են իրական արժեքից մի քանի անգամ իջեցված գներով: Այստեղ խոսքը ոչ այնքան օրենքի բացթողման մասին է, որքան սնանկացման երեւոյթի բացասական հետեւանքի: Թեպետ, այնուամենայնիվ, օրենքի մեջ կարելի է ավելացնել մի կետ, որը նախատեսում է նման թանկարժեք ակտիվների մասնագիտական գովազդային աղբյուրներով հրատարակման պահանջ, որը կվերահսկվեր, ասենք, անմիջապես գործի քննությունը վարող դատավորի կողմից: Մեր կարծիքով՝ ճիշտ կլիներ, որ սնանկ կազմակերպությունների լուծարման ընթացքում վերահսկողության ամրացման նպատակով լուծարային կառավարիչների կողմից իրացվող (աճուրդ, գործարքային վաճառք) արժեքավոր գույքի ցուցակները առանձին հաշվետվությունների տեսքով ներկայացվեին ոչ միայն գործը քննող դատավորին, այլեւ առանձնացված եւ ինքնուրույն հանձնաժողովին:

Ներկայում քաղաքականության եւ բիզնեսի խիստ փոփոկավածությունը դրսևորվում է նաեւ սնանկության գործընթացներում՝ որպես քաղաքական-տնտեսական մրցակցության եւ ճնշումների գործիք: Առկա են դեպքեր, երբ պաշտոնական լծակների գործադրմամբ հրահրվում են սնանկության վարույթներ, եւ անտեսելով առաջարկված առողջացման ծրագրերը՝ դատական քննության դրված անվճարունակության գործերն ավարտում են լուծարմամբ:

Նույն առողջացման ծրագրի իրագործման հաճախակի անտեսումը պայմանավորված է նաեւ այն բանով, որ անվճարունակության վարույթները դատարանը եւ լուծարային կառավարիչները դիտում են որպես անձնական տնտեսական մոտիվացման աղբյուր, եւ «գործը ձեռքից բաց թողնել» պարզապես շահավետ չէ:


Լուծարային կառավարիչների կողմից կատարվող չարաշահումներից կարելի է առանձնացնել մի դեպք, երբ վերջիններս շահագրգիռ չեն ֆիրմայի առողջացմամբ, որի ավարտից հետո կառավարիչը կազմակերպության ղեկը հանձնում է սեփականատերերին: Այն առավելապես դրսևորվում է խոշոր կազմակերպությունների սնանկացման ժամանակ, երբ նման «հանգչող» ֆիրման տեսական ժամանակ (խոսքը տարիների մասին է) կարող է կառավարիչին ապահովել կայուն անձնական եկամուտներով:

Հարցը մասնավոր լուծում կարող է ստանալ օրենսդրորեն շահամիտման համակարգի ներդրմամբ, երբ անվճարունակ ֆիրմաների առողջացման ծրագրի հաջող իրագործման դեպքում անվճարունակության գործով կառավարիչը շարունակ

կում է մնալ ֆիրմայի ղեկին, եւ ինքն է հանդիսանում նախաձեռնողը հետագա գործող վարչախմբի կազմավորման գործում: Դա էապես կնպաստի արտաքին կառավարիչների՝ կազմակերպության գործունեության վերականգնմամբ շահագրգռությանը: Զենարկման առարկա է նաեւ ֆիրմայի արդեն սկսված լուծարային գործընթացի տնտեսապես չիմնականորեն երկարաձգումը, երբ առանց այն էլ սուղ վերականգնվող միջոցներն ուղղվում են ոչ թե կազմակերպության հերթագրված պարտավորությունների համամասնական մարմանը, այլ գուտ ընթացիկ վարչակազմի պահպանման ծախսերին: Հարկ է, լուծարային կառավարիչին օրենսդրորեն ընձեռվող լուծարային գործողությունների հատկացվող ժամանակին զուգընթաց, միջոցների վերադարձման արդյունավետության բարձրացման նպատակով վերահսկող ապարատի (դատարանի եւ Կառավարիչների ինքնակառավարվող կազմակերպության) կողմից խստացնել լուծարային կառավարիչ գործողությունների ձգձգումը՝ անհիմն երկարաձգման համար կիրառելով գրավոր զգուշացումներ ու վարչական տուգանքներ, ընդհուպ կառավարիչ՝ պարտականություններից ազատում:

Ներկայում շատ կազմակերպությունների (հաճախ հեռակարային) տնտեսական աճը խոչընդոտում են կրեդիտորների, աշխատակիցների եւ պետության նկատմամբ կուտակված հսկայական պարտքերը: Որեւէ ներդրող միջոցներ չի տրամադրի նման ֆիրմաներին՝ իմանալով, որ տրամադրված գումարն ուղղվելու է նախկին պարտավորությունների մարմանը: Այստեղ հիմուտ կառավարիչները ներդրում եւ գործնականում կիրառում են «պարտքերից խուսափման» սխեման, որն իրագործվում է հաջորդական մի քանի փուլով: Առաջին փուլում ֆիրմայի ղեկավարության կողմից միջնորդ ֆիրմաների միջոցով (որոնց հետ վարչակազմը համաձայնության է արդեն կնքել) աշխատակիցներից եւ մանր բաժնետերերից, երկարաժամկետ վճարումների բացակայության կամ խուճապային լուրերի ազդեցության պայմաններում, էժան գներով գնում է ընկերության բաժնետոմսերը: Արդյունքում բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը կենտրոնանում է մեկ ձեռքում: Երկրորդ փուլում գրանցվում են երեք կամ չորս նոր ֆիրմաներ, որոնց հիմնադիր է հանդիսանում միջնորդ դրածո ֆիրման: Այդ նորաստեղծ ընկերությունների հետ հիմնական կազմակերպությունը կնքում է ֆինանսական վարձակալության պայմանագիր: Երրորդ փուլում կատարվում է ակտիվների գնումը, ընդ որում՝ վճարումն իրականացվում է երկարաժամկետ մուրհակների տեսքով կամ ոչ լիկվիդային «անպետք» միջոցներով: Չորրորդ փուլում գույքի սեփականատերերը միավորվում են նորաստեղծ բաժնետիրական ընկերության մեջ, իսկ ձեռք բերված գույքը կազմում է նորաստեղծ ֆիրմայում ներդրված սեփական կապիտալը: Իրականացված բազային գործողությունների ընթացքում ձեւավորվում է նոր՝ պարտքերից ազատ գործունակ կազմակերպություն, որը գրավիչ պայմաններ է ստեղծում ներդրումների համար, ավելանում են աշխատատեղերը, վճարվում են հարկերը: Իրապես՝ արդյունքը շատ խոստումնալի է: Իսկ նախկին կազմակերպությունը կես տարուց հետո գնում է ինքնալուծարման՝ սնանկության հողի վրա: Իսկ եթե խոսքն ավելի պարզունակ է հարաբերականորեն մանր գործի մասին է, ապա կարելի է նորից հիմնել միջանցիկ կազմակերպություն կամ «ընկերական» ընկերությանը էժան գներով վաճառել արժեքավոր գույքը, ստացված միջոցներն իրենց աշխատավարձերի տեսքով դուրս գրել, իսկ հետո գնալ ինքնալուծարման՝ ակտիվների բացակայության պայմաններում չմարելով առկա պարտավորությունները (հաճախ բյուջետային): Սակայն այստեղ հարկ է նախատեսել որոշ չափի խոշոր գումար՝ հետագա դատական քաջբռնկի համար (ոչ հազվադեպ՝ կոռուպցիոն նպատակով), քանի որ եթե ապացուցվի, որ կատարված գործարքը խարդախության հիմքեր է ունեցել, ապա կատարված ողջ աշխատանքը գուր էր:

Ժամանակները փոփոխում են, սակայն հարկեր վճարել կամ պարտավորությունները մարել գործարարները նախկինի պես չեն սիրում: Նման պայմաններում ծաղկում է իրավա-տնտեսական խորհրդատվության մի բիզնես-ճյուղ, որը համապատասխան վարձատրության դիմաց պատրաստ է անբարեխիղճ



րարվում, որ կորել են փաստաթղթերը, կամ էլ գողացվել մեքենայից:

Կազմակերպության սնանկացումը հաճախ կրա դեբիտորների (պարտապանների) մոտ պարտքերի մարումից խուսափելու գործիք է հանդիսանում, երբ վերջիններս, իմանալով իրենց կրեդիտորի (պարտատիրոջ) անվճարունակության կամ սնանկացման և մոտակա լուծարման մասին, արհեստականորեն չեն մարում իրենց պարտքը, որը ժամանակի ընթացքում երբեմն անվճարունակ ֆիրմայի կողմից դուրս գրվելով հետհաշվեկշիռ, հետա-

պարտապանին տնտեսական ճկուն խարդախություններով դուրս բաշել բարդ իրավիճակից: Ինչպես նշել ենք՝ ժամանակները փոխվել են, որի հետ փոխվել են միայն խարդախելու խոսանակները: Նման ուղիները տարբեր են: Փորձենք ներկայացնել դրանցից մի քանիսը:

Ամենապարզ տարբերակը «քավության նոխազի» ընտրությունն է վարչախմբի ներկայացուցիչների փոփոխմամբ՝ հաճախ դրածո, որոշ դեպքերում ներքին իրարանցումից անտեղյակ, որոշ դեպքերում համապատասխան վարձատրությամբ, երբեմն էլ զուտ փաստաթղթային մարդկանցով (գողացված անձնագրեր, մահացած անձանց փաստաթղթեր): Նման գործընթացը (պրոֆանացիա) չի մարում պարտքերը, այստեղ խոսքը պատասխանատվության փոխանցման, իսկ ավելի հաճախ՝ գործի ձգձգման մասին է, որովհետև վաղ թե ուշ նման մեքենայությունները բացահայտվում են, պարզվում են կեղծիքների կատարման բուն ժամանակաշրջանը և իրական պատասխանատուները: Նման քայլը շատերին հնարավորություն է տալիս պարզապես անհետանալ: Բայց եթե վարչակազմի փոփոխությունն ընթանա ավելի բարդ մեխանիզմով, ապա կատարված աշխատանքները «ջուրը չեն գնա»: Օրինակ՝ եթե պարտավորությունները հաշվետվությունների մեջ չեն արտացոլվել, և իրավական մարմինների մոտ չկան փաստաթղթեր, որոնք կապացուցեն, որ պարտավորություններն առաջացել են մինչև դեկտեմբերի փոփոխում կամ նախկին դեկտեմբերի անմիջական միջամտությամբ, նախկին աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելը հեշտ գործերից չի համարվի: Այստեղ կարելի է վաղեմության ժամկետը, երբ ձգձգվող ժամանակի ընթացքում օրինական ճանապարհով անհետանում են կարելի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր, որը և շատերին հնարավորություն է տալիս խուսափել պատասխանատվությունից: Մեկ այլ նմանօրինակ տարբերակ՝ սկզբից փոխվում է տնտեսությունը, իսկ այնուհետև համանման կերպով ֆիրման տրվում է արտասահմանցի «հեռու-մոտիկ» ծանոթներից մեկին, ով ոչ մի ցանկություն չունի ժամանել Հայաստան, իսկ իրավական մարմինների արտերկիր գործուղումը դժվար թե արդյունք տա, նույնիսկ տեսականորեն չկա այդպիսի հնարավորություն՝ միջկառավարական համապատասխան փոխհամաձայնության բացակայության պատճառով: Հավանական պատասխանատուների բացակայության պայմաններում գործը սառեցվում է, իսկ որոշ ժամանակ անց՝ ընդհանրապես մոռացվում:

Մեկ այլ հայտնի և քիչ գլխացավանք պատճառող օրինակ վերցվում է անհրաժեշտ փաստաթղթերն ու կնիքը, ոչնչացվում, իսկ մոտակա ոստիկանությունում և մամուլում հայտա-

գայում լուծարային կառավարչի մոտ փաստաթղթերի անհավաքագրելիության կամ երկար լուծարային գործընթացի հետևանքով վաղեմության ժամկետի կիրառմամբ ամբողջությամբ դուրս է գրվում և մոռացվում: Արդյունքում՝ սնանկ ֆիրմայի անբարեխիղճ պարտապանը փորձում է «պղտոր ջրում ձուկ որսալ», հաճախ մտադրված մեքենայությունն իրականանում է ամբողջությամբ, իսկ հակառակ դեպքում նա պարզապես ժամանակ է շահում՝ ուրիշի միջոցներով վարելով իր ընթացիկ գործունեությունը: Նման արարքը, բացի վերը նշվածից, մեկ այլ բացասական հետևանք է և պարունակում. ժամակակից մարված միջոցները կարող են անվճարունակ կազմակերպության առողջացման գործառնությունների իրականացման ժամանակ էապես նպաստել կազմակերպության վերականգնմանը, որից այս պարագայում վերջինս զրկվում է:

Ինչպես նշվեց, կազմակերպության սնանկացումը կոռուպցիոն մեծ ռիսկ է պարունակում: Բացահայտենք դրան առնչվող ես մեկ օրինակ: Սնանկ կազմակերպության պարտատերերը, իրենց չմարված գումարները (դեբիտորական պարտքերը) ընդունված կարգով ծախսագրելով, դուրս են գրում հաշվեկշիռը: Չետագայում սնանկ ֆիրմայի սնանկության ժամանակ կատարվող մասնակի մարումները պարտատիրոջ ղեկավարները չեն մուտքագրում կազմակերպության դրամարկը (կիրառելով կանխիկ դրամի ստացում, այլ ոչ փոխանցումով), այլ յուրացնում են, իսկ սնանկ ֆիրմայի մոտակա լուծարմամբ փաստացի անհնարին է դառնում ապացուցել վճարման փաստը, քանի որ պարտատեր կազմակերպության ներսում վճարումը վկայող փաստաթղթերը ոչնչացվում են, հաշվեկշիռում գումարը չի արտացոլվում, իսկ սնանկ ֆիրմայի լուծարմամբ համապատասխան մարմինները չեն կարող փոխադրած ստուգումներով բացահայտել վճարման փաստը:

Սնանկ կազմակերպությունը (հաճախ խոշորածավալ կամ բանկային) ունի ե՛լ պարտապաններ, ե՛լ պարտատերեր: Վերջիններից ոմանք, գտնվելով սնանկ ֆիրմայի պարտավորությունների մարման ցուցակի ոչ առաջնահերթ դիրքերում, հաճախ մինչև իրենց միջոցները ստանալը ստիպված են երկար սպասել, նույնիսկ հաճախ նրանց գումարների վերադարձման համար կազմակերպության վերականգնվող միջոցները չեն բավարարում: Իսկ կազմակերպության պարտապան իրեն հերթին ուղիներ է փնտրում իր վերադարձելիք միջոցների նվազեցման համար: Այս դեպքում սնանկ ֆիրմայի պարտապանը փոխհամաձայնության է գալիս պարտատիրոջ հետ, նրանից զեղչված տոկոսով ցեխայի (պահանջի իրավունքի գիշման) պայմանագրով կանխիկ գնում է միջոցների ստացման իրավունքը (քանի որ պարտատիրոջը տնտեսապես ձեռնտու է թեկուզ զեղչված, բայց հասանելի և արագ գումարի վե-

րադարձը) ու կազմակերպության ներսում իրավաբանորեն հանդես գալով եւ՝ պարտատեր, եւ՝ պահանջատեր, կիրառելով օրենսդրորեն թույլատրելի հաշվանց՝ եապես նվազ միջոցներով մարում է պարտքը ֆիրմայի նկատմամբ: Իսկ վերջինս կորցնում է կանխիկ վերականգնվող միջոցների զգալի հատված:

Սնանկացմամբ խաբեության օրինակ է կիրառվում նաեւ բնակարանաշինության ոլորտում, երբ արագ եւ զանգվածաբար տարածվող առանց այն էլ շահութաբեր ոլորտ մուտք են գործում շինարարական նոր հիմնարկներ, որոնք նախապես գովազդվելով եւ որոշակի հաճախորդներ հավաքելով (ովքեր նախապես առաջին հայացքից իրենց համար գրավիչ պայմաններով զգալի մոծումներ են կատարում)՝ ֆորմալ գնում են շինարարության տարածք, որի սեփականատեր հաճախ հանդիսանում է մեկ այլ տնտեսավարող սուբյեկտ, ստեղծում են իրենց հետ կապակցված մատակարար ֆիրմաներ, երբեմն էլ արտերկրում գրանցված, որոնց էլ իբր ստացված գումարներն ուղղում են շինանյութ ստանալու համար: Սակայն դրանց չմատակարարման ձեւակերպմամբ եւ այլ մեքենայություններ կիրառելով՝ շինարարական ընկերությունն իրեն հայտարարում է սնանկ եւ անցնում լուծարման գործընթացով: Իսկ գնորդը մնում է եւ՝ առանց գումարի, եւ առանց բնակարանի: Իհարկե՝ 33-ում այն լայն տարածում չի գտել, սակայն մասնավոր օրինակներն էլ, իրենց գումարային զգալի ծավալից ելնելով, լուրջ խնդիր են ներկայացնում հանրության համար:

Այն դեպքում, երբ կազմակերպության առջեւ կուտակվել են հսկայական պարտքեր, որոնք ժամանակի ընթացքում պարզորոշ կերպով կա՛մ պետք է բռնագանձվեն, կա՛մ կազմակերպությունը պետք է սնանկանա, ղեկավարությունը, կազմակերպության առկա միջոցները հնարավորինս իր շահերին ծառայեցնելու համար, դիմում է «շախմատի ձիու քայլի»: Դրա համար ամսաթվի ճիշտ ընտրմամբ (խուսափելով հրապարակվող հաշվետվություններում ընդգրկվելուց, առաջ ընկնելով հիմնական պարտատիրոջից եւ բավարարելով սնանկացմամբ լուծարման համար անհրաժեշտ չնարված պարտավորության ժամկետը) առաջ է քաշվում նոր՝ կազմակերպության ղեկավարության հետ համաձայնեցված պարտատեր, ընդ որում՝ հաճախ որպես պարտավորություն հանդես է գալիս չվճարված ծառայությունը կամ ֆինանսական այլ գործիք, որի գումարը չի զիջում հիմնական պարտավորությունների չափին: Կեղծ պարտատիրոջ իրավաբանական կարգավիճակն ընտրվում է այնպես, որ նա լուծարման ժամանակ պարտատերերի ցուցակում առաջնահերթություն ունենա մնացած պարտատերերի նկատմամբ: Ընդ որում՝ լուծարային գործընթացում փորձ է արվում առկա միջոցների իրական արժեքի գնահատումը նվազեցնել, որպեսզի դրա դիմաց ստացվող միջոցները չուղղվեն հաջորդ հերթերում գրանցված պարտավորությունների մարմանը: Արդյունքում՝ օրինական ձեւակերպմամբ կազմակերպությունն ազատվում է պարտավորությունների մարումից, որի համար նախատեսված միջոցներն անցնում են կազմակերպության ղեկավարության անձնական տնօրինմանը:

Օտարերկրյա գործարարները, ովքեր նախատեսել են հաստատանյան շուկայում կարճաժամկետ կամ միանգամյա գործունեություն (հիմնականում ներկրում եւ մանրամեծածախ վաճառք), օրինական կերպով գրանցվում են հարկային մարմիններում, ծավալում են իրենց տնտեսական գործունեությունը, որի ավարտից հետո (վերջնական հասույթը ստանալուց եւ դուրս բերելուց հետո) մեկնում են արտերկիր՝ իրենց ետեւից թողնելով հսկայական չնարված պարտավորությունների (հիմնականում հարկային) զանգված: Իսկ արտերկրում նրանց պատասխանատվության կանչելն իրական կյանքում անհնար է դառնում: Արդյունքում՝ մեկնարկած սնանկացման վարույթն ավարտվում է պարտքերի դուրսգրմամբ:

Չայտնի է խարդախության եւս մեկ գործիք՝ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով: Արտադրական կամ առեւտրային կազմակերպությունը, վաճառքի հանելով իր իրացման ենթակա ապրանքները, ստեղծում է իրացման դիվերային ցանց՝ կազմված մի քանի ֆիզիկական անձից: Կերջիններս, գալով համաձայնության, նախապես պատրաստ-

վում եւ ազատվում են ունեցվածքային ցանկացած իրավունքներից: Դիվերային խմբի հետ օրինական կերպով կնքվում է պայմանագիր, որի համաձայն՝ իրացման ամբողջ հասույթից հարկման ենթակա ԱԱՀ-ի մասի մարման պարտականությունն ընկնում է դիվերային օղակի վրա: Չգալի խմբաքանակի վաճառքից հետո հարկային պարտավորությունների կատարման ժամանակ ֆիզիկական անձիք իրենց հայտարարում են սնանկ եւ հրաժարվում պարտավորության մարումից: Նման մեխանիզմի քրեական տարրի ապացուցումը բավական դժվար է, իսկ արդյունքը՝ խոստումնալի:

Կազմակերպությունը բիզնես-ծրագրի կազմմամբ եւ ընթացիկ առեւտրային պայմանագրերի ներկայացմամբ բանկային հաստատություններից պարբերաբար ներգրավում է վարկային գումարներ, որոնցով գնում է տարաբնույթ տեսականու ապրանքներ եւ դրանք դեմայինգային իջեցված գներով վաճառում (հաճախ կապակցված ընկերությունների): Այդ պարբերաշրջանը ապահովում է ներքին մեծ քանակի ապրանքա եւ դրամաշրջանառություն, որն առաջին հայացքից ներկայացնում է ակտիվ, վստահություն ներշնչող գործարարություն եւ հետագա ստուգումների ժամանակ իր խճճվածությամբ բարդացնում ու խոչընդոտում է կիրառված մեքենայությունների բացահայտումը: Ժամանակի ընթացքում միջոցների «լվացմամբ» ու նվազմամբ ընկերությունն իրեն հայտարարում է սնանկ՝ հրաժարվելով մարել ստանձնած պարտավորությունները:

Ստեղծվում են սահմանափակ պատասխանատվությամբ իրավաբանական ընկերություններ, որոնք զբաղվում են հասարակությանը տարաբնույթ ծառայությունների մատուցմամբ (զբոսաշրջություն, բնակարանային վերանորոգում, ապրանքների մատակարարում եւ այլն): Ֆիրման ծառայությունները մատուցում է մրցակցային ժժան, սակայն կանխավճարային գներով, իսկ երբեմն էլ՝ աշխատանքների, առաքվող ապրանքների կամ վերանորոգվող բնակարանի գրավով վարկավորմամբ: Դրամական միջոցները հավաքագրելուց հետո ծառայությունների մատուցման ընթացքում, առանց գործընկերին եւ ներքին աշխատակիցներին տեղեկացնելու, ֆիրման գնում է ինքնալուծարման՝ յուրացնելով ներգրաված միջոցները: Արդյունքում՝ հաճախորդներն ու աշխատակիցները մնում են առանց պայմանագրային պարտավորությունների կատարման ու աշխատավարձի, իսկ միջոցների վերադարձ, իրավական պատասխանատվության ենթարկելով, վերջիններս անկարող են, քանի որ ֆիրման այլեւս գոյություն չունի, իսկ նրա ղեկավարները ժամանակավորապես անհայտանում են:

Սնանկության կիրառման տարածված դեպք է, երբ խոշոր կազմակերպությունները կամ բանկերը իրենց կողմից տրամադրվող կեղծ վարկերով կամ փոխառություններով դուրս են գրում միջոցներ, որոնք առաջին հայացքից զգալի չեն մայր կազմակերպության համար: Դուրս գրված միջոցները ղեկավարության եւ կապակցված ֆիրմայի կամ ֆիզիկական անձի հետ յուրացվում են, իսկ վերջիններս ժամանակի ընթացքում, մինչեւ պարտավորությունների մարման ժամկետը, երրորդ կապակցված սուբյեկտի պահանջների միջոցով հայտարարվում են անվճարունակ, անցնում են կեղծ սնանկացմամբ՝ ազատվելով պարտավորությունների վերադարձումից:

Եթե ընդհանրացված պարզաբանենք մեքենայացված սնանկության բուն նպատակը, այն կընտրորոշվի որպես կազմակերպության սերուցքի դուրսքաշում: շրջանառությունից դուրս են բերվում ակտիվները՝ պարտավորությունները թողնելով նույն տեղում:

Մեր քննարկած վերոհիշյալ տարբերակների շահադիտական նպատակներով կիրառումը սնանկացման գործընթացում հանդիսանում է «սառցաբեկորի» լույ վերին մասը, այն դեպքում, երբ իրականում սնանկացումն ու այլ գործիքների կիրառումը կարող է օգտագործվել անհաշիվ մեքենայությունների ժամանակ, որոնք ենթադրում են ոչ միայն արտաքսնապես օրինական գործողություններ, այլեւ օրենքի անմիջական խախտումներ՝ փաստաթղթերի կեղծում, պաշտոնատար անձանց կաշառում, գույքի թաքցում եւ քրեածին այլ տարրեր: Սնանկացման գործընթացները, իրենց բարդությունից ելնելով, թույլ են տալիս եապես խճճել իրականությունը եւ թաքցնել իրական

պատճառները, որոնք ոչ հազվադեպ կայանում են իրավասու անձանց դիրքի չարաշահումներում: Այս ամենի հետ մեկտեղ, ապացուցել հանցանքի տարրերը, բացահայտել դրանց պատճառահետևանքային կապերը՝ հեշտ գործերից չեն, և քրեական պատժի իրագործումը միշտ չէ, որ կիրառվում է: Նաե՛ս չպետք է մոռանալ, որ սնանկացումը օրերի հարց չէ. այն կարող է սկսվել տարիներ առաջ և հենց սնանկացման վարույթից մինչև լուծարումը նույնպես տեսել տարիներ: Այստեղ արդեն կարելի է լուծարային կառավարիչների, դատական մարմինների, հարկային ոստիկանության աշխատակիցների մասնագիտական բարձր որակավորումն ու փոխհամագործակցությունը՝ նախկինում կատարված պայմանագրերի վերլուծման, դրանցում հանցանքի տարրերի բացահայտման ու ապացուցման աշխատատար գործում: Սակայն այստեղ էլ օրենսդրական շրջանցի հնարավորություն է ընձեռվում, երբ սահմանվում է նախորդ ժամանակաշրջաններում կատարված գործարքների քննման 2 տարի, իսկ անօրինականությունը կարող է կատարված լինել տարիներ առաջ, որի ընթացքում էլ ոչ մեկ ղեկավարություն կարող է փոփոխված լինել, իսկ շատ հաճախ էլ դատական պրոցեսում կիրառվում է վաղեմության ժամկետով գործի քննության դադարեցում: Ամեն դեպքում սնանկացման բուն էությունը պարտատերերի միջոցների վերականգնումն է, ոչ թե «կծիկի հավաքումը» անցյալում, և կարծում ենք, որ պետությունը պետք է ընտրի ոչ թե առավելագույն պատժման ու պարտքային բեռի ավելացման, այլ առողջացման քաղաքականություն: Ստեղծված իրավիճակում առավել կարելի է ապագայում տևտեսության ծավալվելը, քան անցյալում պրպտելը:

Ցանկացած միջամտում՝ լուծարային գործընթացի բարեփոխումների նպատակով, իրապես պետք է լինի ե՛լ մտածված, ե՛լ տեղին, ե՛լ ժամանակին, քանի որ հայ իրականության մեջ մեծ է ռիսկը, որ կոռուպցիոն մթնոլորտում կատարվող միջոցառումները ոչ թե կվերացնեն մեքենայությունները, այլ կբարձրացնեն դրանց իրագործման գները՝ ներգրավելով նոր մասնակիցներ:

Սնանկացումը տևտեսական հանցագործությունների է՝ միջոց է, ե՛լ հաճախ՝ տրամաբանական ավարտ:

Կատարված վերլուծություններն ամփոփելով՝ գծապատկերի տեսքով փորձել ենք ներկայացնել սնանկության հետ կապված մեքենայությունների բացահայտման, վերլուծման, պայքարի ուղիների մշակման, և արդյունավետ հետազոտման համար անհրաժեշտ գործընթացների համակարգը:

Ձեռնարկությունների գործունեության արդյունավետության և արտադրական ռիսկերի գնահատման գոյություն ունեցող մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեսականորեն մշակված մոդելները և մեթոդները չունեն ամբողջական (համալիր) բնույթ և հաշվի չեն առնում տեղեկատվության անկատարությունն ու երկրնարդյունքները [1, 2]: Կառավարման որոշումների քանակական վերլուծության հայտնի մեթոդները գործնականում չեն համապատասխանում այն պահանջներին, որոնք ապահովում են արտադրական համակարգերի ռազմավարությունների արդյունավետության և ռիսկի գնահատման ճշտությունն ու հուսալիությունը [3, 4]:

Առաջարկում ենք մեթոդաբանություն, որը ռիսկի ինտեգրալային ցուցանիշի հաշվարկման միջոցով թույլ է տալիս գնահատել արտաքին և ներքին ռիսկերի ազդեցությունը ինտեգրված արտադրական համակարգի (ԻԱՀ) գործունեության վրա՝ հաշվի առնելով արտադրական համակարգի և արտաքին միջավայրի պարամետրերի պատահական (ստոխաստիկ) բնույթը: Այս մեթոդաբանությունը, որի մասնակի դեպքերը ներկայացված են [5]-ում, մենք մշակել ենք և ընդհանրացրել:

ԻԱՀ-ը կարող է մի քանի ճյուղ միավորել մեկ միասնական արտադրական գործընթացում: ԻԱՀ-ի կազմի մեջ մտնող ձեռնարկությունները ձեռավորում են ուղղաձիգ արտադրական շղթաներ (ԱՇ): Յուրաքանչյուր ԱՇ ԻԱՀ-ում ներառում է երեք փուլ (գծապատկեր 1):

Ռիսկերի կառավարումը ԻԱՀ-ը կառավարող ընկերության գործունեության հիմնական ուղղություններից մեկն է: Այս նպատակով օգտագործվող տեղեկատվության հավաքագրումն է վերլուծությունը կարելի է նշանակություն ունեն: Այստեղ ծագում է տեղեկատվության սխալ գնահատման ռիսկ, հետեաբար՝ նաե՛ս կառավարման ոչ օպտիմալ որոշումների ռիսկ:

ԻԱՀ-ի ռազմավարության մշակման կարելի է փուլերից է մակրոտնտեսական միջավայրի ազդեցության վերլուծությունը և գնահատումը: Այդ նպատակով սահմանվում է կիրառվում է արտաքին միջավայրի անբարենպաստ ազդեցության ռիսկի ինտեգրալային ցուցանիշը (R_{out}): Արտաքին են այն բոլոր գործոնները, որոնք ուղղակիորեն կապված չեն ԻԱՀ-ի գործունեության հետ, հետեաբար՝ արտաքին ռիսկածին գործոնները համարվում են չկարգավորվող: Այդ պատճառով կարելի է ԻԱՀ-ի արտաքին (մակրոտնտեսական) միջավայրի ռիսկերի մոնիտորինգը:

Արտաքին ռիսկի ինտեգրալային ցուցանիշը հաշվարկվում է որպես վերլուծվող ռիսկերի միջին կշռված արժեք.

$$R_{out} = \sum_{i=1}^M (p_i \times x_i) \quad (1),$$

որտեղ՝ M - դիտարկվող ռիսկածին բաղադրիչների քանակն է, X_i - ռիսկի աստիճանը բնութագրող ցուցանիշն է,

p_i - ցուցանիշի տեսակարար կշիռն է, ի դեպ՝ $\sum p_i = 1$:

ԻԱՀ-ի ռիսկի ինտեգրալային ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ է սահմանել երկմակարդակ աստղակ, որը պարունակում է բազային և սովորական գործոնների հավաքածու: Բազային գործոններից յուրաքանչյուրը բնութագրվում է բաղադրիչ գործոնների՝ ենթագործոնների հավաքածուով և գտնվում է սանդղակի առաջին մակարդակում: Սովորական գործոնները՝ ենթագործոնները, գտնվում են սանդղակի երկրորդ մակարդակում և բաղադրիչներ չունեն [15]:

Գրականության մեջ հաճախ առանձնացնում են արտաքին միջավայրը բնութագրող հետեյալ գործոնները՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, բնապահպանական [6], [7], [9]: Որոշ աղբյուրներում ռիսկերը հստակ չեն բաժանվում ներքին ու արտաքին ռիսկերի և ներկայացվում են միավորված ձևով՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և այլն [8]: Կարծում ենք, որ առավել օբյեկտիվ գնահատման համար նպատակահարմար է բացառել ռիսկերի միավորումը և դրանք դիտարկել առանձին-առանձին:

Նշված ռիսկերը կարելի է դիտարկել որպես բազային ԻԱՀ-ի համար և ներմուծել հետեյալ նշանակումներով՝ քաղաքական - X_1 , տնտեսական - X_2 , սոցիալական - X_3 , գիտատեխնիկական - X_4 , բնապահպանական - X_5 : Այս դեպքում (1) բանաձեռը կըն-

1. Егор Низамов, Банкротство ради богатства, Коммерсант, 08.07.2009.

2. «Սնանկության մասին» ՀՀ օրենք, 25.12.2006, Հոդված 3

3. Юрий Курин, Должен ли дженгмен, если он должен, 15 марта 2001, Отдел политики.

4. Юрий Очерет (глава Агентства по вопросам банкротства Украины), Безнаказанное банкротство, Business information network 08.09.2003.

5. О.М. Свириденко, Назначение и цели института банкротства в хозяйственном обороте, Право и экономика, #3, март 2003.

6. Сергей Митрофанов, Мафия арбитражных управляющих, Vesti.ru от 04.02.2000.

7. Эдуард Голодницкий, Как правильно избавиться от кредиторов и госслужащих с помощью фиктивного банкротства и не попасть под уголовную статью, Полезно знать & Интересно читать, Business information network, 10.03.2006.